ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ.

Համայնքը	Միջոցառման անվանումը	օրը	ժամը	Անցկացման վայրը
Գեղասար	Ավագնու արտահերթ նիստ	05.10.2020թ	11:00	Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Գեղասար 3փ, 2 նրբ., թիվ 2)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. հոկտեմբերի 05-ին՝ ժամը 11.00-ին Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 11.00

1.Գեղասար համայնքի ավագանու 2020թ. հոկտեմբերի 05-ի, 8-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

2. Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

3. Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

4. Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

5. Գեղասար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

6. ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքում ֆուտբոլի դաշտի կառուցման համար հողամաս հատկացնելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

ՆԱԽԱԳԻԾ 35-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
05.10.2020ԹՎԱԿԱՆԻ 8-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի ավագանու 05.10.2020թվականի 8-րդ հերթական նիստի օրակարգը.

1.Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

2.Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

3.Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

4.Գեղասար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանարապետությանը նվիրելու մասին:

5.ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքում ֆուտբոլի դաշտի կառուցման համար հողամաս հատկացնելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ 36-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի պահանջներով Գեղասար համայնքի ավագանին տալիս է իր հավանությունը.

Գեղասար համայնքի 2020թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին, համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդմանը:

ՆԱԽԱԳԻԾ 37-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

2020 թվականի հոկտեմբերի 05-**ի N 37-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Աղանյան Աշոտ Խաժակի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

2. Ավետիսյան Գեվորգ Գրիգորի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

3. Մարգարյան Աննա Տիգրանի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

4. Սաղաթելյան Հասմիկ Շալիկոյի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 38-Ն

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի Գեղասար համայնքի ավագանին որոշում.

1.Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում կատարել փոփոխություններ բյուջեի պահուստային ֆոնդի 4269 հոդվածի 01.06.01. խումբ ենթախմբից 340.000 /երեք հարյուր քառասուն հազար/ դրամ գումար որից՝ 40.000/քառասուն հազար/ դրամ գումար տեղափոխել 4819 հոդվածի 08.02.04. խումբ ենթախմբին <<Բերքի տոն-2020>>-ի և <<Մարաթոն>> համահայկական հիմնադրամին գումար փոխանցելու համար, 300.000/երեք հարյուր հազար /դրամ գումար տեղափոխել 4269 հոդվածի 06.04.01. խումբ ենթախմբին Գեղասար համայնքի փողոցային լույսերին լուսատուներ և լամպեր ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ 39-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <,Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ Կառավարության 2011թվականի մարտի 24-ի, թիվ 305-Ն որոշումով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Գեղասար համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը և որոշում է

1. ՀՀ Կառավարության 2005թվականի հունիսի 09-ի, թիվ 844-Ն որոշմամբ Գեղասար համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-028-0021-0004 ծածկագրով 0.1530հա /պետական սեփականության 230.45քմ գույքով ծանրաբեռնված համայնքի կենտրոնի համար անհրաժեշտ/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

2. Համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ՆԱԽԱԳԻԾ 40-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի, թիվ 286-Ն որոշմամաբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը Գեղասար համայանքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գեղասար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից 06-028-0009-0001 ծածկագրից առանձնացված 0.3 հա մակերեսով հողամասը տրամադրել համայնքում ֆուտբոլի դաշտ կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: